1918Ի ՄԱՅԻՍԵԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՒԱՔԱԾՈՒՆԵՐՈՒՄ

ԱՐԵՒԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ
arevikmeliqyan@gmail.com

1918ի մայիսեան հերոսամարտերը հայ ժողովրդի գոյապայքարի պատմութեան փայլուն էջերից են: Դրանց միջոցով կասեցուեց Արեւելեան Հայաստանը զաւթելու եւ հայութեանը վերջնականապէս ոչնչացնելու թուրքական ծրագիրը: Գոյապայքարն իրականացուեց բազում հայորդիների անձնազոհութեան ու քաջութեան շնորհիւ:

Մայիսեան հերոսամարտերի հիմնաւոր ուսումնասիրութիւնը կատարուել է բաւականին ուշ, քանի որ ժամանակի հայ քաղաքական-հասարակական կեանքը ղեկավարող հիմնական կուսակցութիւնը ՀՅԴն էր, որի գործունէութիւնը առարկայական չէր գնահատւում: Դրա հետեւանքով 1918-20ի պատմութեան շատ հիմնահարցեր ներկայացուել են թերի[1]: Ժամանակ անց փոխուեց խորհրդային իշխանութիւնների վերաբերմունքը մայիսեան հերոսամարտերի գնահատման հարցում: Սարդարապատի հերոսամարտի 50ամեակի եւ Բաշ-Ապարանի հերոսամարտի 61րդ տարեդարձի[2] առթիւ կառուցուեցին հերոսամարտերը յաւերժացնող յուշահամալիրներ:

Հայաստանի ԿԿ Կենտկոմի Ա. քարտուղար Եակոբ Զարոբեանի (1960-66) նախաձեռնութեամբ, 1918 մայիսեան պատմական իրադարձութիւնների յիշատակն անմահացնելու անհրաժեշտութիւնից ելնելով, առաջացաւ Սարդարապատի ճակատամարտի յուշարձան կառուցելու գաղափարը: Կազմակերպական աշխատանքների հիմնական դերը ստանձնեց ԿԿ Հոկտեմբերեանի շրջկոմի քարտուղար Վլադիմիր Դարբինեանը[3]: Զարոբեանին փոխարինած Անտոն Քոչինեանի (1966-74) օրօք աւարտուեց յուշահամալիրի շինարարութիւնը[4]:

1968 Մայիսի 25ին բացուեց Սարդարապատի յուշահամալիրը[5]: Հանդիսաւոր բացման ժամանակ նշուեց Սարդարապատի ճակատամարտի 50 ամեայ յոբելեանը, տեղի ունեցաւ հանդիսաւոր նիստ՝ հասարակական գործիչների, գրողների, ճակատամարտի մասնակիցների մասնակցութեամբ: 1978ին, յուշահամալիրի տարածքում բացուեց Հայաստանի Ազգագրութեան Պետական Թանգարանը (ՀԱՊԹ), 2010ից՝ Սարդարապատի Հերոսամարտի Յուշահամալիր, Հայոց Ազգագրութեան եւ Ազատագրական Պայքարի Պատմութեան Ազգային Թանգարան:

Բացման առաջին իսկ օրուանից թանգարանի աշխատակազմը ձեռնամուխ է եղել Սարդարապատի ճակատամարտի մասին նիւթերի հաւաքման եւ գիտահետազօտական աշխատանքներին: Հերոսամարտերից անցել էին տարիներ, մասնակիցներից շատերը այլեւս ողջ չէին: Դա դժուարացրել էր լիարժէք տեղեկութիւն ստանալու հնարաւորութիւնը: Չկային բաւարար

արխիւային նիւթեր, ողջ մնացած մասնակիցներից շատերը չէին ցանկանում բարձրաձայնել հերոսամարտերին իրենց մասնակցութեան մասին: Այս պայմաններում անհատական եւ խմբային գործուղումների ժամանակ ձեռք են բերուել ճակատամարտի մասնակիցների լուսանկարներ, յուշեր, օրագրեր: Փաստերը համադրելու եւ հաւաստիութիւնը ճշտելու նպատակով ուսումնասիրութիւններ են կատարուել Հայաստանի Ազգային Արխիւում, Հայաստանի Ազգային Գրադարանում: Ուսումնասիրութիւններին համընթաց պատճէնուել են ճակատամարտերի մասին քարտէզներ, գծապատկերներ, հրամաններ, վաւերագրեր, լուսանկարներ, բանաւոր տեղեկութիւններ: Գիտաշխատողները նամակագրական կապեր եւ հանդիպումներ են կազմակերպել ճակատամարտի ողջ մնացած մասնակիցների եւ նրանց հարազատների հետ, կազմել լուսանկարների, անձնական իրերի, յուշերի հաւաքածուներ, անուանացանկ-քարտարան: Իւրաքանչիւր մասնակցի համար ստեղծուել է անձնական քարտ՝ ձեւանմուշ-հարցաշարով, որն ընդգրկում է մասնակցի կենսագրական տուեալները եւ ռազմական գործողութիւնների մասին տեղեկութիւններ: Լրացուել է շուրջ 350 անհատական քարտ, որոնց մի մասը լրացրել են անձամբ մասնակիցները, մնացածը՝ գիտաշխատողները՝ եղած աղբիւրների (գրականութիւն, մամուլ, արխիւային փաստաթուղթ, բանաւոր տեղեկատուութիւն) հիման վրայ: Գործընթացը շարունակւում է, կատարուել է վիթխարի աշխատանք, բայց կան շատ չբացայայտուած հարցեր: Հաւաքուած նիւթերի հիման վրայ, 1983ին թանգարանում բացուեց ճակատամարտին 65ամեակին նուիրուած ցուցադրութիւն, որը համալրուեց յետագայ տարիներին: 2008ին թանգարանի կենտրոնական եռագմբէթ ցուցասրահում կազմակերպուեցին նոր՝ «1918թ. Մայիսեան Հերոսամարտերն եւ ՀԱՀ Հռչակումը»[6], իսկ 2018ին՝ «1918թ. Մայիսեան Հերոսամարտերին եւ Հայոց Պետականութեան 100 ամեակին» նուիրուած համալրուած ցուցադրութիւններ[7]:

1918ի մայիսեան հերոսամարտերի վերաբերեալ հաւաքուած նիւթերը պահպանւում են ՀԱԹի «Ֆոտո» («Ֆ»), «Փաստաթուղթ» («Փ») «Հերոսամարտերի Պատմութիւն» («ՀՊ»), «Թանկարժէք Մետաղ», («ԹՄ»), «Ազգագրութիւն եւ Կենցաղ 1, 2» («ԱԿ-1, 2») «Գործուածք» («Գ»), «Ապակի» («Ա»), «Կերպարուեստ» («Կ») ֆոնդերում: Հաւաքածուների փաստանիւթը պարունակում է մասունքներ, որոնք ունեն պատմական արժէք: Դրանք լուսանկարներ, յուշագրութիւններ, փաստաթղթեր, նամակներ, ամսագրեր, թերթեր, գրքեր են, որոնց լուսաբանմամբ հանրութեանն է ներկայացւում ոչ միայն թանգարանային հաւաքածուն, այլեւ շրջանառութեան են դրւում եզակի տեղեկութիւններ, որոնք երբեւէ հրապարակուած չեն եղել եւ կարող են հիմք հանդիսանալ պատմագիտական ուսումնասիրութիւնների համար:

Անդրադառնանք այդ հաւաքածուներին ըստ էութեան:

Թանգարանի «Ֆոտո» («Ֆ») հիմնական եւ գիտաօժանդակ («ՖԳՕ») ֆոնդերում են պահպանւում 1918ի մայիսեան հերոսամարտերի՝ Սարդա-

ռապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի մասնակիցների լուսանկարներ ու սեւանկարներ: Գերակշռում են Սարդարապատի ճակատամարտի մասնակիցների լուսանկարները (220, որից 20ը՝ թուային տարբերակով): Նրանցից 32ը մասնակցել են ե՛ւ Սարդարապատի ե՛ւ Բաշ-Ապարանի հերոսամարտերին: Բաշ-Ապարանի հերոսամարտի մասնակիցների բնորինակ լուսանկարները 103ն են: Ղարաքիլիսայի հերոսամարտի մասնակիցների լուսանկարները սակաւաթիւ են՝ 14 (7ը՝ թուային տարբերակով) միաւոր:

Նոյն ֆոնդում են պահպանւում հրամանատարներ Թովմաս Նազարբէկեանի, Մովսէս Սիլիկեանի, Դանիէլ-Բէկ Փիրումեանի, 5րդ գնդի հրամանատար Պօղոս-Բէկ Փիրումեանի, հայկական հրետանու ընդհանուր հրամանատար գնդապետ Քրիստափոր Արարատեանի, սպայական կազմի, Գէորգ Ե. կաթողիկոս Սուրէնեանցի, Գարեգին եպիսկոպոս Յովսէփեանցի, շարքային աշխարհազօրայինների, ինչպէս նաեւ Սարդարապատի ճակատամարտին նուիրուած տօնակատարութիւնների լուսանկարներ:

Առանձին խումբ են կազմում *կոռնէտ* Վանոյի, յետագայում՝ ԽՍՀՄ կրկնակի հերոս, մարաչախտ Յովհաննէս Բաղրամեանի, լուսանկարները (ՀԱՊԹ5396 «Ֆ»-231/1ա, բից մինչեւ ՀԱՊԹ5396 «Ֆ»-231/21ա, բ, գ)[8]: Պահպանւում են Սարդարապատի յուշահամալիր նրա այցի (1968) մասին պատմող լուսանկարներ (ՀԱՊԹ 4055 «Ֆ»-217/8, 9 (1968) ՀԱՊԹ3144 «Ֆ»-174/5):

1918 մայիսեան հերոսամարտերի հազարաւոր անյայտ մասնակիցների անուններ դեռ բացայայտման կարիք ունեն[9]: «Ֆ» ֆոնդը ամբողջացնելու եւ նոր անուններով հարստացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել Յատուկ Հեծեալ Գնդի հրամանատար Ամիրխանեանի, հետեւակային 6րդ գնդի հրամանատար Ա. Դոլուխանեանի, 2րդ հեծեալ գնդի հրամանատար Ն. Զալինեանի, Ղարաքիլիսայի 1ին հրաձգային զօրաջոկատի հրամանատար Ա. Բէյ-Մամիկոնեանի, 3րդ հրաձգային գնդի հրամանատար Ս.Սամարցեանի, Էրզրումի հետեւակային գնդի հրամանատար Հալաբեանի եւ այլ մասնակիցների լուսանկարները:

(«Փ») հիմնական եւ գիտաժանդակ («ՓԳՕ») ֆոնդերում են պահպանւում 1968ին յուշահամալիրի բացման, Սարդարապատի ճակատամարտի 50ամեակին նուիրուած տպագիր նիւթերը՝ ամսագրեր, թերթեր, գրքեր: Արժէքաւոր են Սարդարապատի ճակատամարտի ռազմական գործողութիւնների գծապատկերներն ու քարտէզները, որոնք պատճէնուած են ՀԱԱից:

Մեծ արժէք են ներկայացնում Յակոբ Կոջոյեանի[10] 1918 Մայիսի 27ի եւ 27-28ի Սարդարապատի ճակատամարտը ներկայացնող ռազմական գործողութիւնների գծապատկերները, որոնք յետագայում հիմք են հանդիսացել նոր քարտէզներ գծագրելու համար: Հաւաքածուն համալրուած է 1966ին Բաղրամեանի գծած Սարդարապատի ճակատամարտի ռազմա-

կան գործողութիւնների քարտէզով: Պահպանւում են նաեւ 1918 Մայիսի 14ի Երեւանի զօրախմբի տեղաբաշխման գծապատկերը եւ Ղարաքիլիսայի ճակատամարտի ռազմական գործողութիւնները ներկայացնող գծապատկեր-քարտէզը:

Հաւաքածուում առանձին խումբ են կազմում մասնակիցների յուշերը հերոսամարտերի մասին: Պատմագիտութեան ասպարէզում կարեւոր ու անփոխարինելի է յուշագրութեան սեռը: Դրանք յաճախ միակ վկայութիւններն են այս կամ այն իրադարձութեան կամ դէպքի վերաբերեալ: Այն լրացնում է պատմական սկզբնաղբիւրային նիւթը, բացայայտում դէպքերի ու իրադարձութիւնների հաւաստիութիւնը եւ ի յայտ բերում նոր փաստեր: Մասնակիցների յուշերը թուով տասն են, ձեռագիր՝ շարադրուած պարզ, անկեղծ եւ աչքի են ընկնում տեղեկութիւնների առատութեամբ՝ վերհանելով իրադրութեան իրական պատկերը[11]: Դրանց թում են Սարդարապատի ճակատամարտի 5րդ գնդի Ա. Գումարտակի կապի վաշտի հրամանատար Գէորգ Սարգսեանի, 5րդ հրաձգային գնդի զինուոր Յովհաննէս Մարգարեանի, 5րդ գնդի Ա. Վաշտի հրամանատար՝ Յակոբ Սիմոնեանի, նոյն գնդի զինուորներ Լեւոն Ադունցի, Լեւոն Նիկոլեանի, մասնակիցներ Երուանդ Կիւրեղեանի, Հայկազ Եփրէմեանի եւ Հմայեակ Խաչատրեանի, բժիշկ Քրիստափոր Փիրումեանի[12], Ապարանի հերոսամարտի մասնակից Մամիկոն Տէր-Սարգսեանի, զինուորական բժիշկ Նշան Մանիշակեանի յուշերը: Նրանց յուշերն ամփոփուեցին 2014ին թանգարանի հրատարակած *1918թ. Մայիսեան Հերոսամարտերը Մասնակիցների Յուշերում* գրքում: Հեղինակային այս խմբի ջանքերով 2008ին, 1918ի մայիսեան հերոսամարտերի 90ամեակի կապակցութեամբ, հրատակուել է *Սարդարապատ՝ Յաղթանակների Բնօրրան* գրքոյկը՝ օգտագործելով թանգարանի հաւաքածուներում պահուող լուսանկարներ եւ քարտէզների կրկնօրինակները:

Հաւաքածուում ընդգրկուած նամակներն անձնական կամ պաշտօնական գրութիւններ են: Դրանց թում է Սարդարապատի ճակատամարտի մասնակից Լեւոն Ադունցի 1981 Մարտի 10ի ՀԱՊԹ 3040 «Փ»-12/2 հաշուառանիշի նամակը: Նա գրում է, որ 1968 Մայիսի 18ին Հոկտեմբերեանի շրջանային կոմիտէից ստացուած հեռագրով հրաւիրուել է յուշահամալիրի բացմանը, որը տեղի է ունենցել Մայիսի 25ին, եւ նրա ներկայութիւնը համարուել է կարեւոր: Ադունցը նշել է, որ հեռուստատեսութեամբ յայտարարութիւն է արուել Սարդարապատի ճակատամարտի մասնակիցների լուսանկարների, յուշերի հաւաքման եւ թանգարան յանձնելու վերաբերեալ: Նա գրել է. «*...Ես ունէի զինուորական համազգեստով... ռազմաճակատից նկար: Այդ նկարը մեծացրեցի եւ մեքենագրուած յուշերիս հետ տարայ թանգարան 1971թ.: Թանգարանը դեռ չէր բացուել [թանգարանը բացուել է 1978ին], ես դրանք թողեցի Հոկտեմբերեանի շրջանային կոմիտէի երկրորդ քարտուղարի [Միքայէլ Նուրիջանեան] մօտ*»:

ՀԱՊԹ 4067/11 «Փ»-56/11 հաշուառանիշի նամակը հասցէագրուած է Բաղրամեանին՝ ծննդեան 70ամեակի առթիւ: Սարդարապատի ճակատամարտի մասնակից, Խզնաուզի ջոկատի հրամանատար Կարօ Հասան-Փաշայեանի (Ղասաբբաշեան) դուստր Լիա Կարպովնան խնդրում է վերջինիս որոշ տեղեկութիւններ յայտնել հօր մասին: Բաղրամեանը պատասխանում է խորին շնորհակալութեամբ եւ տեղեկացնում, որ նրա հայրը աչքի է ընկել իր անձնուրաց եւ հերոսական մարտական գործողութիւններով:

Կենսագրական տեղեկութիւններ պարունակող նամակներից է Սարդարապատի ճակատամարտի մասնակից, 5րդ հայկական հրաձգային գնդի Ա. գումարտակի հրամանատար Վարդան Մկրտիչի Ջաղինեանի[13] մասին պատմող ՀԱՊԹ 4067/8 «Փ»-56/8 հաշուառանիշի նամակը (08.12.1968), որի հեղինակն է նոյն գնդի նախկին սպայ Մարտին Մարտիրոսեանը[14]: Նամակում նշւում է, որ Ջաղինեանը ճակատամարտի յաղթանակից երկու օր առաջ զոհուեց հերոսի մահով: ՀԱՊԹ 4067/6 «Փ»- 56/6 հաշուառանիշ նամակում Մարտին Մարտիրոսեանը հաղորդում է Կարօ Հասան-Փաշայեանի[15] կենսագրական տուեալները, ինչպէս նաեւ ճակատամարտի ժամանակ բարձունքների վրայ նրա վճռական յարձակման մանրամասներ: ՀԱՊԹ 4067/7 «Փ»-56/7 հաշուառանիշ նամակում Մարտին Մարտիրոսեանը պատմում է Սարդարապատի ճակատամարտի մասնակից ենթասպայ Արսէն Յովհաննէսի Սարգսեանի մասին[16], ով զոհուել է 21 տարեկանում՝ բարձունքներից մէկի գրոհի ժամանակ: Մարտիրոսեանը նշում է, որ նրան յուղարկաւորել են Էջմիածնի Ս. Գայիանէ եկեղեցու բակում:

«Փաստաթուղթ» ֆոնդում է գտնւում Սարդարապատի ճակատամարտի մասնակից Հայկ Այվազեանի[17] եղբօր՝ Եղիշէ Այվազեանի ՀԱՊԹ 4067/2 «Փ»-56/2 հաշուառանիշի նամակը (03.10.1969 Ստամբուլ) «Սարդարապատի եւ Բէօյիւք-Վեդիի Անմահ Հերոս ու Նահատակ Կապիտան Հայկ Այվազեանի Հակիրճ Կենսագրութիւնը» վերնագրով: Նամակում ներկայացուած են նրա ծնողների եւ եղբօր կենսագրութիւնները, ինչպէս նաեւ եղբօր մահուան հանգամանքները Բէօյիւք-Վեդիում: Եղիշէն գտնուել է այն կամուրջների պաշտպանների շարքերում, որոնցով թշնամին ձգտում էր անցնել Արաքսը: Այդտեղ էլ նա զոհուել է իր վաշտի 30 զինուորների հետ եւ թաղուել Երեւանի քաղաքային գերեզմանատանը:

Նամակներ պահպանւում են նաեւ «Հերոսամարտերի Պատմութիւն» ֆոնդում: Դրանց թւում է Սարդարապատի եւ Բաշ Ապարանի ճակատամարտերի մասին կարեւոր տեղեկութիւններ պարունակող բաշգառնեցի Մարտիրոս Աբրահամեանի (1886-1957) 1956 Օգոստոսի 23ի *Ալիք* թերթի խմբագրին հասցէագրած ՀԱՊԹ 8564 «ՀՊ»-26 հաշուառանիշի նամակը, որտեղ նա պատասխանել է «ոմն պարոն սպայի» մեղադրանքին թէ՝ Մարտիրոս Աբրահամեանի յուշերում տեղ են գտել որոշակի սխալներ[18]:

2015ին «Հերոսամարտերի Պատմութիւն» ֆոնդը համալրուեց եւս մէկ նամակով՝ ՀԱՊԹ 8565 «ՀՊ»-27/4 հաշուառանիշով: Այն գրել է Բաղրամ-

եանը 1968 Հոկտեմբերի 28ին՝ Մոսկուայից եւ հասցէագրուած է ոմն Արամայիս Մարտիրոսովիչի, որի հետ ծառայել է 3րդ հայկական հրաձգային գնդում: Այն թանգարանին է նուիրել «Տուրիզմի Հայկական Ինստիտուտ, Ռուսաստանի Տուրիզմի Միջազգային Ակադեմիայի» մասնաճիւղի ռեկտոր Ռոբերտ Մինասեանը: Հաւաքածուում չկան զօրավարներ Նազարբէկեանի, Մ. Սիլիկեանի նամակները: Նազարբէկեանը իր յուշերը գրելու համար դիմել է Մ. Սիլիկեանի օգնութեանը՝ խնդրելով նրան մանրամասն տեղեկութիւններ հաղորդել 1914-18՝ ռազմական գործողութիւնների մասին: Վերջինս պատրաստակամ օգնել է նրան: Այս նամակները թանգարանում կարող էին լինել նաեւ լաւ ցուցանմուշներ:

Թանգարանի ֆոնդերում պահպանւում են նաեւ գրութիւններ, օրագրեր, հրամաններ, կոչեր, մասնակիցների կենսագրականներ, ելոյթների բնագրեր, որոնք ընթերցուել են հերոսամարտերի տօնակատարութիւնների եւ մասնակիցների մեծարման ժամանակ:

Ուշագրաւ է «1918թ. Մայիսեան Հերոսամարտերը եւ ՀԱՀ» ցուցադրութեան մէջ ներկայացուած Յովհաննէս Թումանեանի «Անդրանիկը եւ Ղարաքիլիսան» գրութիւնը[19] զօրավար Անդրանիկի՝ Դսեղում մնալու եւ երկաթուղագիծը պահելու մասին: Մեծ բանաստեղծը համոզիչ փաստարկներով արդարացրել է զօրավարին՝ Ղարաքիլիսայի անկման պատճառ համարելով գլխաւոր հրամանատարութեան իրար հակասող հրամանները:

«Հերոսամարտերի Պատմութիւն» ֆոնդում պահպանւում է ՀԱՊԹ 8213/5 «ՀՊ»-3 հաշուառանիշով, 38 էջից բաղկացած Սարդարապատի ճակատամարտի մասնակից, հայկական հրետանու ընդհանուր հրամանատար Արարատեանի օրագիրը, որը թանգարանին է նուիրել նրա թոռը՝ Եուրի Արարատեանը՝ 2008ին:

Թանգարանի կենտրոնական եռագմբէթ ցուցասրահում՝ Սարդարապատի հերոսամարտը ներկայացնող խորանում, ներկայացուած են ՀԱԱից կրկնօրինակուած երեւանեան ուղղութիւնը պաշտպանող զօրաջոկատի հրամանատար Մովսէս Սիլիկեանի կոչերը, որոնցից մէկը հնչել է Սարդարապատի ճակատամարտի ժամանակ՝ Մայիսի 24ին (ՀԱԱ ֆ. 280, ց. 2, գ. 4, թ. 1): Դիմելով հայերին, նա կոչ է արել շտապել ազատագրելու հայրենիքը, գործի դնել վերջին ճիգերը՝ թշնամուն հարուածելու համար, իսկ հայուհիներին՝ յիշեցրել 5րդ դարի փափկասուն տիկնանց, եւ խորհուրդ տուել հետեւել նրանց օրինակին: Միւսը Սիլիկեանի՝ Մայիսի 29ի «Հայեր, մենք պէտք է թուրքերից հետ վերցնենք Ալեքսանդրապոլը...» (ՀԱԱ ֆ. 280, ց. 2, գ. 6, թ.1) կոչն է: Կոչերի թւում են նաեւ հրամանատար Նազարբէկեանի Մայիսի 26ի (ՀԱԱ ֆ.121, ց. 2, գ. 84, թ. 1) եւ Թումանեանի Մայիսի 16ի (Յովհաննէս Թումանեան, *Երկերի Լիակատար Ժողովածու, Հտր. 7*, Երեւան 1995, էջ 354-55) կոչերն՝ ուղղուած լոռեցիներին: Ցուցադրւում է նաեւ Գէորգ Ե. կաթողիկոսի պատասխանը գլխաւոր հրամանատարութեանը՝ էջմիածնից չհեռանալու մասին. «...Ոչ եւ ոչ, հազար անգամ ոչ, ես

չեմ լքի մեր սուրբ նախնիների աւանդած Մայր Աթոռը, ես չեմ հեռանայ Հայոց Առաքելական օջախից»: Կաթողիկոսի յաջորդ քայլը հոգեւոր դասին հասցէագրուած յանձնարարականն է՝ կոչելու ժողովրդին անզիջում պայքարի՝ թշնամու դէմ, զէնքը ձեռքին ընդունելու փառաւոր մահ, կամ տանել փառաւոր յաղթանակ. «...Ես միշտ էլ հաւատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնութիւնները: Իսկ դրանք ո՞վ չգիտի: Բայց վերին նախախնամութեան բարեհաճ թելադրութեամբ համոզուած եմ նաեւ, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռեւս չի ասել վերջին իր խօսքը եւ խօսքն այդ պիտի լինի յաղթական»:

Հաւաքածուն պարունակում է մեծարման երեկոների եւ այլ միջոցառումների 160ից աւելի հրաւիրատոմս: Դրանց թւում է նաեւ Սարդարապատի ճակատամարտի մասնակից Վահան Տէր-Առաքելեանի[20] ծննդեան 100ամեակին (Երեւան, 1984) նուիրուած ՀԱՊԹ6315 «Փ»-194/1 հաշուառանիշի հրաւիրատոմսը, Սարդարապատի հերոսամարտի մասնակից, եզդիական աշխարհազօրային գնդի հրամանատար Ջահանգիր աղա Խատիֆովի[21] մահուան վկայականը (ՀԱՊԹ 6066/4 «Փ»-171/4) եւ արդարացման փաստաթուղթը (1959) (ՀԱՊԹ 6066/3/«Փ»-171/3):

Ֆոնդերում պահպանւում են նաեւ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերին նուիրուած մամուլի եւ գրականութեան բազմաթիւ նիւթեր, գրքեր ու յօդուածներ (հայերէն եւ օտար լեզուներով), հերոսամարտերի մասնակիցների անձնական իրեր (հերոսամարտերի ժամանակ օգտագործուած զէնք, հեռադիտակ, փողկապ, ժամացոյց, ակնոց, գօտի, ծխամորճ, ծխախոտատուփ եւն.), որոնք թանգարանին նուիրել են մասնակիցների ժառանգները:

«Թանկարժէք Մետաղ» ֆոնդային հաւաքածուում են գտնւում Սարդարապատի ճակատամարտի կազմակերպիչ, հայոց նորագոյն պետականութեան հիմնադիր Արամ Մանուկեանի անձնական առարկաները՝ բաժակակալը (ՀԱՊԹ 8196/1 «ԹՄ»-835), ժամացոյցը (ՀԱՊԹ 8196/2 «ԹՄ»-835), թեզանիքակալները (ՀԱՊԹ 8196/3ա,բ «ԹՄ»-835)[22]:

Հաւաքածուներում են պահպանւում Ղարաքիլիսայի ճակատամարտի մասնակից Յովհաննէս Բալոյեանի[23] «Մաուզէր» մակնիշի երկու ատրճանակները (ՀԱՊԹ 8424/1,2 «ԹՄ»-855), փամփշտակալներով գօտին (ՀԱՊԹ 8424/3 «ԹՄ»-855) փոխանցել է Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ սրբազան Սարգսեանը 2012ին, Բաշ-Ապարանի ճակատամարտի մասնակից Գաբրիէլ Ահարոնեանի սուրը (ՀԱՊԹ 8314/1 «ՀՊ»-4) նուիրել է թոռնուհի Բերսաբէ Ահարոնեանը 2010ին, աշխարհազօրային Սարգիս Թարվերդեանի մանգաղը (ՀԱՊԹ 7114 «ԱԿ-2»-597) եւ հրացանի սուինը (ՀԱՊԹ 7123 «ԹՄ»-796) նուիրել է թոռ Սերոժ Սարգսեանը 1988ին, Նաւասարդ Վեզիրեանի[24] «Մոսին» հրացանը (ՀԱՊԹ 8440 «ՀՊ»-19) եւ դաշոյնը (ՀԱՊԹ 8398/1 «ՀՊ»-11) նուիրել է թոռը՝ Շմաւոն Վեզիրեանը 2014ին, Հմայեակ Խաչատրեանի դաշոյնը (ՀԱՊԹ 542/ա,բ «ԹՄ»-75,

գնուել է Հրաչիկ Խաչատրեանից (1988ին), ժամացոյցները (ՀԱՊԹ 7120/1,2 «ԹՄ»-793), գնուել են Բաւական Խաչատրեանից (1988ին):

«Ազգագրութիւն եւ Կենցաղ 1» ֆոնդի երկու հեռադիտակներից մէկը (ՀԱՊԹ 2861 «ԱԿ-1»-349) պատկանել է Վարդան Ջաղինեանին: Այն օգտագործուել է ճակատամարտի ժամանակ: Ջաղինեանին նուիրուած հաւաքածուն ամբողջացնում են նրա զինուորական պայուսակը (ՀԱՊԹ 6021 «Գ»-2779) եւ սգոյ պսակի ժապաւէնը (ՀԱՊԹ 2864 «Գ»-1254)՝ նուիրել է եղբայրը՝ Գրիշա Ջաղինեանը 1980ին:

Միւս հեռադիտակը (ՀԱՊԹ 8422/1 «ՀՊ»-16) պատկանել է Բաշ-Ապարանի ճակատամարտի մասնակից Սամսոն Մնացականեանին[25]՝ նուիրել է թոռը՝ Արմէն Մնացականեանը 2013ին:

Ա. Համաշխարհայինի ժամանակ մարտերում ցուցաբերած խիզախութեան եւ քաջութեան համար զինուորները եւ կամաւորականները յաճախ են պարգեւատրուել շքանշաններով ու մեդալներով, այդ թւում նաեւ Գէորգիեւեան խաչերով: Ֆոնդի հաւաքածուում առկայ է չորրորդ աստիճանի Գէորգիեւեան արծաթէ խաչ՝ ժապաւէնով (ՀԱՊԹ 8243 «ԹՄ»-477):

Հետաքրքրութեան են արժանի Սարդարապատի ճակատամարտի մասնակից Երուանդ Մամաջանեանի[26] գօտին եւ ժամացոյցները: Նա գօտին կրել է Սարդարապատի ճակատամարտի ժամանակ (թանգարանում պահուող լուսանկարում նա այդ գօտին է կրել), իսկ նրա որդու՝ Ալեքսանդր Մամաջանեանի հաղորդած տեղեկութեան համաձայն ժամացոյցներից մէկը նուէր է ստացել Բաշ-Ապարանի ճակատամարտի հրամանատար Դրաստամատ Կանայեանից:

Ցանկալի կը լինէր ֆոնդային հաւաքածուներում ունենալ 1918 մայիսյան հերոսամարտերի հրամանատարական կազմի եւ շարքային մասնակիցների զէնքեր, շքանշաններ, մեդալներ ու զինուորական հագուստներ:

Սարդարապատի հերոսամարտին բազմիցս անդրադարձել են հայկական արուեստի եւ գրականութեան գործիչները, ինչպէս՝ քանդակագործ Աշոտ Յարութիւնեանը («Ֆիդայու Երդումը» արձանախումբ դիպլոմային աշխատանք, Երեւան, 1986, գիպս, նուիրուած Սարդարապատի ճակատամարտի հերոսներին[27]): Արուեստի գործեր են Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի հերոսամարտերին մասնակցած եզդիների հեծեալ կամաւորական գումարտակի հրամանատար Ուսուբ-բէկ Թեմուրեանցի[28] բրոնզաձոյլ կիսանդրին (ՀԱՊԹ 8421 «ՀՊ»-15)[29], Արամ Մանուկեանի բրոնզաձոյլ կիսանդրին[30]:

«Կերպարուեստ» ֆոնդում են պահպանւում նաեւ Սարդարապատի հերոսամարտին նուիրուած մի շարք կտաւներ: Դրանց թւում են Գուրգէն Ղուկասեանի[31] եւ Գէորգ Մնացականեանի[32] եռապատկերները, Յակոբ Յակոբեանի[33], Էմիլ Սարուխանեանի[34], Հենրիկ Իգիթեանի անուան Գեղագիտութեան Ազգային Կենտրոնի սաների աշխատանքները[35]:

Այսպիսով, Սարդարապատի հերոսամարտի յուշահամալիր, ՀԱԱՊԱԹի ֆոնդային հաւաքածուներում պահպանուող արժէքները Հայաստանի Պատմութեան Թանգարանի եւ ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի հաւաքածուների կողքին պարունակում են գիտական շրջանների համար հետաքրքրութիւն ներկայացնող թանգարանային առարկաներ եւ փաստագրական նիւթեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ յետագայ հետազօտութիւնների: ՀԱԱՊԱԹն Հայաստանի Հանրապետութեան միակ թանգարանն է, որտեղ լիարժէք ներկայացւում է 1918-20 պատմութիւնը:

Սարդարապատի յուշահամալիրը այն եզակի վայրերից է, որտեղ իւրաքանչիւր հայ հպարտութեան զգացում է ունենում: Ամեն տարի թանգարան են այցելում հայ եւ օտարազգի շուրջ 26,000 զբօսաշրջիկ, ներառեալ՝ հերոսամարտերի մասնակիցների ժառանգներ՝ յարգանքի տուրք մատուցելու հերոսամարտերի մասնակիցների յիշատակին:

Այցելուների մէջ մեծ թիւ են կազմում ՀՀ տարբեր մարզերի աշակերտներ, որոնց համար կազմակերպւում են հայրենասիրական կրթական ծրագրեր:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Սամսոն Քառեան, *Հայաստանի Առաջին Հանրապետութեան Պատմագրութիւն*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2003, էջ 5:

[2] Յուշահամալիրը կառուցուել է ի յիշատակ Մեծ Եղեռնի, Ապարանի հերոսամարտի եւ Երկրորդ Աշխարհամարտում զոհուածների:

[3] Վլադիմիր Դարբինեանը պատմում է. «*ՀԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղար եղած ժամանակ (1959-61) հանրապետութեան ակտիւ ընդլայնուած խորհրդակցութիւն էի անցկացնում, երբ վերջում ինձ մօտեցաւ գրող, հրապարակախօս Հրաչեայ Քոչարը եւ յայտնեց հետեւեալ միտքը. «Հայաստանում տեղի ունեցած բոլոր կռիւներից մեծը Սարդարապատի ճակատամարտն է, որովհետեւ նրա յաղթանակի շնորհիւ մեր հայ ժողովուրդը փրկուեց կործանումից»*: Զրոյցի ընթացքում պահանջում էր, որ հնարաւորութեան դէպքում Հոկտեմբերեանում կառուցուի Սարդարապատի յուշարձան-կոթող: Այդ օրուանից սկսեցի մտածել, թէ ինչպէս կարելի է այդ մտայղացումը իրականացնել»: 1961ի վերջին Դարբինեանը նշանակւում է Հոկտեմբերեանի կուսշրջկոմի առաջին քարտուղար եւ այցելում Քոչարին: Երկար զրոյցից յետոյ համաձայնւում են, որ «*Հոկտեմբերեանում պէտք է կառուցուի Սարդարապատի ճակատամարտին վերաբերող յուշակոթող*» (Աշոտ Ղուկասեան, *Վլադիմիր Դարբինեանի Կեանքն Ու Գործը*, Երեւան, «Զանգակ-97» Հրատ., 2006, էջ 5-6):

[4] Սարդարապատի յուշահամալիրը կառուցուել է կոլտնտեսութիւնների, պետական տնտեսութիւնների, Հոկտեմբերեանի շրջանի ամբողջ հասարակութեան նիւթական օժանդակութեան միջոցով ու նրանց հայրենանուէր աշխատանքի շնորհիւ (նոյն, էջ 7):

[5] Կառոյցի հեղինակներն են ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ռաֆայէլ Իսրայէլեանը, քանդակագործներ Արա Յարութիւնեանը, Սամուէլ Մանասեանը եւ Արշամ Շահինեանը:

[6] Կազմակերպիչներ՝ տնօրէն Կարէն Արիստակէսեան, գիտ. գծով փոխտնօրէն Սվետլանա Պօղոսեան, բաժնի վարիչ Արեւիկ Մելիքեան, յարդարող՝ Էդիկ Կարսեան:

[7] Կազմակերպիչներ՝ Արիստակէսեան, Պօղոսեան, Մելիքեան, գիտաշխատողներ Թեհմինէ Պօղոսեան, Մարիամ Կուրեղեան, յարդարող Աշոտ Մանուկեան:

[8] Յովհաննէս Բաղրամեանը մեծ դեր է ունեցել Սարդարապատի յուշահամալիրի կառուցման գործում: Նա այցելել է ԽՍՀՄ Կենտկոմի առաջին քարտուղար Լէոնիտ Բրեժնեւին եւ համոզել նրան յուշարձանի կառուցման անհրաժեշտութեան հարցում: Բաղրամեանը մանրամասնել է, որ 1918 Մայիսին Սարդարապատի ճակատամարտում անձամբ է կռուել թուրքերի դէմ (նոյն, էջ 7): Նա իր զինուորական ծառայութիւնը սկսել է 1915ին, մեկնել է կովկասեան ռազմաճակատ, իսկ Սարդարապատում եղել է յատուկ հեծեալ գնդի վաշտի հրամանատար:

[9] Սարդարապատի ճակատամարտի մասնակիցների լուսանկարների հաւաքման գործում մեծ ներդրում է ունեցել հայ մշակոյթի նուիրեալ, բանահաւաք Միհրան Մուրադեանը: Նա 1970-87՝ շրջել է Հայաստանի շրջաններով եւ հաւաքել աւելի քան 70 լուսանկար, որոնց դարձերեսին գրել է տուեալ անձի համառօտ կենսագրութիւնը: Անաւարտ այս հաւաքածուն ստեղծուել է հետեւողական աշխատանքով:

[10] Գծապատկերների բնօրինակները պահպանւում են ՀԱԱում: Դրանք մակագրուած են ռուսերէն՝ «գծագրել է ռազմական գերատեսչութեան աստիճանաւոր Յ. Կոջոյեանցը՝ ծնունդով Ախալցխայից)»:

[11] Ա. Բ. Մելիքեան, «1918թ. Մայիսեան Հերոսամարտերը Մասնակիցների Յուշերում», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 2012:2-3, էջ 149. նաեւ՝ *1918թ. Մայիսեան Հերոսամարտերը Մասնակիցների Յուշերում*, աշխ.՝ Կ. Արիստակէսեան, Ս. Պօղոսեան եւ Ա. Մելիքեան, խմբ.՝ Կ. Արիստակէսեան, Երեւան, «Անտարես» Հրատ., 2014:

[12] Նա յետագայում դարձաւ բժշկական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, 180 աշխատութիւնների հեղինակ:

[13] Ծնուել է Ստեփանաւանում (նախկին Ջալալ Օղլի) 1899ին: 1914ին աւարտել է Թիֆլիսի 3րդ արական գիմնազիան: Նոյն թուականին ընդունուել է Թիֆլիսի եռնկերական զինուորական դպրոցը: 1917ին փոխադրուել է 5րդ հայկական հրաձգային գունդ: Որպէս 5րդ հայկական մահապարտների գնդի առաջին գումարտակի հրամանատար մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին եւ յաղթանակից երկու օր առաջ հերոսի մահով զոհուել 25 տարեկան հասակում:

[14] Ծնուել է 1894ին Ելիզաւէտպոլի նահանգի Գանձակ քաղաքում (այժմ՝ Ադրբեջանի Հանրապետութիւն, Գեանջա): 1914-15՝ սովորել է Մոսկուայի Համալսարանում, ապա՝ Խարկովի նահանգի Չուգուն քաղաքի ռազմական դպրոցում՝ ստանալով հետեւակի կրտսեր սպայի զինուորական աստիճան: 1915ին անցել է զինուորական ծառայութեան: Սարդարապատի ճակատամարտից յետոյ աշխատել է *Ժողովուրդ* թերթի տպարանում: Յեղափոխական գործունէութեան համար բանտարկուել է: Ազատ արձակուելուց յետոյ մեկնել է Բաթում: 1919ին միքանի ընկերների հետ մեկնել է Փարիզ, աշխատանքի: Մահացել է 1982ին, Երեւանում:

[15] Սարդարապատի ճակատամարտի մասնակիցների թում աչքի է ընկել ախալքալաքցի երիտասարդ գնդապետ Կարօ Նազարէթի Հասան-Փաշայեանը՝ ծնուած 1896ին: Դեռեւ 1915-17ի կովկասեան ճակատի կռիւների ընթացքում նա արդէն հռչակուել է որպէս խիզախ եւ անվեհեր հրամանատար՝ յաղթանակով պսակել բոլոր մարտերը...: Նա շատ արագ կարգի է բերում իր գունդը եւ մասնակցում Սարդարապատի ճակատամարտին: Ընդհանուր յարձակման ժամանակ նրա զօրքերը նոյնպէս հարուածում են թշնամու աջ թեւին: Մայիսի 26ի պատմական յարձակումն աւարտում է թուրքերի կատարեալ պարտութեամբ: Նոյն օրուայ երեկոյեան Հասան-Փաշայեանի զօրքերը մինչեւ Մաստարա հետապնդում են խուճապահար թուրքերին եւ հսկայական կորուստներ պատճառում: Նա մեծ համբաւ է ունեցել նաեւ Սովետական Հայաստանի նորակազմ բանակում:

[16] Արսէն Սարգսեանի եղբայրը՝ Սարդարապատի ճակատամարտի 5րդ գնդի առաջին գումարտակի կապի վաշտի հրամանատար Գէորգ Սարգսեանը իր յուշերում նշում է, որ ստանալով Գէորգ Ե. կաթողիկոսի թոյլտուութիւնը, Ա. Սարգսեանի աճիւնը յուղարկաւորել է Ս. Գայիանէ վանքի հիւսիսային մուտքի դիմաց: Տարիներ անց, ստանալով Վազգէն Ա. կաթողիկոսի թոյլտուութիւնը, Արսէնի գերեզմանի վրայ դրել է տապանաքար: Ս. Գայիանէ եկեղեցու բակում են թաղուած Դանիէլ-բէկ Փիրումեանը, Հաւէն Մահտեսի Բաբայեանը, Սմբատ Բորոյեանը (Մախլուտո), Սամսոն Տէր-Պողոսեանը (Խենթ): 2013ից, ՀԱԱՊՊԱԹի նախաձեռնութեամբ, Ս. Գայիանէ եկեղեցում Մայիսին տեղի է ունենում հերոսներին նուիրուած պատարագ եւ խնկարկման, ծաղկեպսակների զետեղման արարողութիւն նրանց շիրիմներին:

[17] Ծնուել է Երեւանի նահանգի Սուրմալու գաւառի Իգդիր քաղաքում: Նախնական կրթութիւնը ստացել է Իգդիրի ռուսական վարժարանում, այնուհետեւ՝ Էջմիածնի Գէորգեան ճեմարանում: 1913-14՝ աւարտել է Թիֆլիսի առեւտրական դպրոցը, այնուհետեւ զօրակոչուել բանակ: Մասնակցել է Ա. Համաշխարհային պատերազմին: Մահացել է 1920ին:

[18] Նամակը թանգարանին է նուիրել է ԵՊՀ Ընդհանուր Լեզուաբանութեան Ամբիոնի վարիչ Վարդան Պետրոսեանը՝ 2015 Փետրուարի 2ին:

[19] «Ղարաքիլիսայի անկման օրից սկսած՝ անդադար մարդիկ են պատահում, որոնք դատապարտում են Անդրանիկին, որ Ղարաքիլիսայի պատերազմի ժամանակ նա՝ խոշոր ուժերով՝ մնաց էնքան մօտիկ՝ Դսեղ նստած, մինչդեռ եթէ օգնութեան հասնէր Դուալից, պատերազմը բոլորովին ուրիշ ելք կ'ունենար: Այո՛, միանգամայն ճշմարիտ են ասում, որ եթէ Անդրանիկը Լոռու կողմից, Դուալից օգնութեան հասնէր՝ պատերազմը անկասկած ուրիշ ելք կ'ունենար, սակայն բոլոր խօսողները մի բան չգիտեն, որ հենց էդպէս էլ ծրագրած էր եւ կատարուելու վրայ էր, երբ զինուորական բարձր հրամանատարութիւնից հրահանգ եկաւ Անդրանիկին՝ մնալ Դսեղ եւ պաշտպանել երկաթուղու գիծը: Դսեղից տրուած տեղեկութեան հետեւանքով մինչեւ էս հրամանը փոխուեց՝ արդէն երրորդ օրն էր եւ գրեթէ միաժամանակ եկաւ Ղարաքիլիսայի անկման բօթը: Յովհ. Թումանեան»: Նամակի բնօրինակը պահպանւում է Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում:

[20] Ծնուել է 1883 Օգոստոսի 24ին (Սեպտեմբերի 5) Մալիշկա գիւղում: Նախնական կրթութիւնը ստացել է Զնաբերդ գիւղում (այժմ՝ Նախիջեւանի վարչական տարածքում): Սովորել է Գէորգեան ճեմարանում: Մասնակցել է Ա.

Համաշխարհային Պատերազմին, պարգեւատրուել բազմաթիւ մեդալներով: Մասնակցել Արեւմտեան Հայաստանի համար մղուած մի շարք մարտերի, այնուհետեւ՝ Սարդարապատի ճակատամարտին, եղել Կարսի բերդի սպայակոյտի հրամանատար: 1921ին Կարսի բերդի անկման ժամանակ բազմաթիւ հայ սպաների հետ գերի է ընկել: Նրա զինուորական գործունէութիւնն աւարտուել է 1921ին: Ապրել է Թիֆլիսում: Մահացել է 1941 Մայիսի 2ին՝ Ուխտա քաղաքում:

[21] Ծնուել է 1874ին Վանի նահանգի Չիբուխլու գիւղում: Եղել է Արեւմտեան Հայաստանի եզդիների առաջնորդներից մէկը: 1900ականների սկզբից գլխաւորել է հեծեալ ջոկատ, մասնակցել է Ա. Աշխարհամարտին: Սերտ կապ է հաստատել Վանի հայերի հետ: Յետագայ տարիներին, թուրքական իշխանութիւնների հայահալած քաղաքականութեան պայմաններում, աջակցել է հայ ֆիդայիներին, ցոյց տուել ռազմական եւ նիւթական օգնութիւն: Ջահանգիր աղայի աշխարհազօրային ջոկատը մասնակցել է 1918ի Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի հերոսամարտերին: Անհիմն բռնադատուել է, մահացել բանտում՝ 1943ին: Յետմահու արդարացուել է:

[22] Արամ Մանուկեանի առարկաները թանգարանին է նուիրել դուստրը՝ Սեդա Մանուկեանը՝ 1998ին: Արծաթէ բաժակակալի վրայ գրուած է «Քաւոր աղին»: Կլորաւուն, զարդանախշ, սեւադապատ մակերեսով թեզանիքակալների վրայ ամրացուած շղթան աւարտւում է զոյգ թռչուններով ձեւաւորուած «Ա» տառի պատկերով:

[23] Ծնուել է 1886ին Սեբաստիայի նահանգում: Եղել է կամաւոր Բուլղարիայից: 1910ին մասնակցել է Սալմաստի եւ Ուրմիայի Սարդարուտ գիւղի, իսկ 1918ին՝ Ղարաքիլիսայի կռիւներին: Մահացել է Ուրմիա քաղաքում 1954ին:

[24] Ծնուել է Վաչագան գիւղում: Մասնակցել Ա. Աշխարհամարտին, Սարդարապատի ճակատամարտին, Զանգեզուրի համար մղուող մարտերին: 1930ին ձերբակալուել է՝ որպէս դաշնակցական: 1937ին գնդակահարուել է Երեւանի բանտում:

[25] Ծնուել է Արարատի շրջանի Արարատ (Դաւալու) գիւղում: Սովորել է Դաւալուի երկդասեան դպրոցում: 1906-10՝ ծառայել է բանակում: Մասնակցել է Ա. Համաշխարհայինին, 1918 Մայիսին՝ Բաշ-Ապարանի ճակատամարտին: 1937 Հոկտեմբերի 19ին ձերբակալուել եւ աքսորուել է: 1947 Նոյեմբերին վերադարձել է աքսորավայրից եւ բնակութիւն հաստատել Էլար (ներկայիս՝ ք. Աբովեան) գիւղում: 1956ին անցել է կենսաթոշակի: Մահացել է Երեւանում 1958ին:

[26] Ծնուել է 1896ին Թիֆլիսում: 1916ին սովորել է սպայական դպրոցում, այնուհետեւ՝ Մոսկուայի Ֆինանսների Ինստիտուտում: Աշխատել է հաշուապահ: 1914ին մտել է զինուորական ծառայութեան: Մասնակցել է Ա. Համաշխարհայինին, որի ընթացքում աւարտել է սպայական դպրոցը եւ ստացել սպայի կոչում: 1918ին մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին՝ որպէս Մարգարայի կամրջապահ գումարտակի հրամանատար: Մասնակցել է նաեւ Բ. Համաշխարհայինին: Սովետական կարգերի հաստատումից յետոյ ապրել է Լենինգրադում (Սանկտ-Պետերբուրգ), ապա՝ Մոսկուայում, կեանքի վերջին տարիներին՝ Երեւանում: Մահացել է 1961ին Երեւանում, թաղուել է Թիֆլիսում:

[27] Արձանախմբի կենտրոնում Գարեգին Եպս. Յովսէփեանն է՝ Եղիշէի գիրքը ձեռքին: Նրա աջ եւ ձախ կողմերում ֆիդայիներ են: Արձանախումբն ամբողջացնում են աշխարհազօրայինները՝ աշխատանքային գործիքներով զինուած:

[28] Ծնուել է 1869ին, Սուրմալու գաւառի Ասլանլու գիւղում: 1880ին ընդունուել է Էջմիածնի Գէորգեան ճեմարանը: Եղել է ՀԱՀ խորհրդարանի պատգամաւոր:

Մայիսեան բախտորոշ օրերին Ջահանգիր աղա Խատիֆովի հետ միասին ղեկավարել է եզդիների հեծեալ գումարտակը:

[29] Հեղինակ՝ քանդակագործ Սերժ Մեհրաբեան: Կիսանդրին թանգարանին է նուիրել Մաջիթ բէկ Ուսուբեանը, 2012ին: Այն ցուցադրուած է «1918թ. Մայիսեան Հերոսամարտերն եւ ՀԱՀ Հռչակումը» ցուցադրութիւնում:

[30] Հեղինակ՝ սփիւռքահայ հասարակական գործիչ, մտաւորական Յակոբ Ճանպազեան, որ այն թանգարանին նուիրեց 2018ին:

[31] «Դէպի Վերջին Հանգրուան» կտաւում պատկերուած է հայ ընտանիքի գաղթի տեսարան: Աղջիկներից մէկի ուսին աստուածաշունչն է, իսկ միւսը՝ ձեռքերը երկինք պարզած, աղօթում է Աստծուն: Եռապատկերի յաջորդ կտաւը կոչւում է «Սարդարապատի Ճակատամարտը»: Ներկայացուած է մի դրուագ ճակատամարտից: Կենտրոնում սպիտակ նժոյգ հեծած հերոսն է՝ յարձակման պահին: Նրա հուժկու հարուածից թուրքերը ձիերից ցած են ընկել, իսկ մի մասն էլ դիմել է փախուստի: Եռապատկերի երրորդ մասը «Ծեր Մասիսի Հայեացքի Տակ» խորագրով կտաւն է: Կենտրոնում վերածնուած Հայաստանը խորհրդանշող հայ ընտանիքն է՝ շրջապատուած նոր ժամանակների արհեստներն ու արուեստները ներկայացնող կերպարներով: Եռապատկերը թանգարանը ձեռք է բերել 1983ին (ՀԱՊԹ 4278/ա, բ, գ/ «Կ» 5/ ա, բ, գ):

[32] «Ասք Հայաստանի» եռապատկերի առաջին մասը կոչւում է «Յարատեւութիւն-1915թ.»: Կտաւի առանցքը կազմում են երիտասարդ կնոջ եւ տղամարդու կերպարները, որոնք հրաշքով փրկուել են Մեծ Եղեռնից: Երիտասարդ կինն իր հետ կորստից փրկել է Սուրբ Գիրքը: Տղամարդը պահել է յաւերժութեան ջահը: Ջոյգի գլխավերեւում՝ զէնքը ձեռքին հսկայ արծուաթեւ ֆիդային է, որը փրկել է նրանց կորստից եւ տանում է դէպի յարատեւութիւն: Երկրորդ՝ «Մաքառում-1918թ.» խորագրով կտաւը նուիրուած է Սարդարապատի ճակատամարտին: Նկարի ստորին մասում մարտնչող չորս ֆիդայիներից մէկը վիրաւորուել է եւ վերջին շնչում ափի մէջ ճզմում է վիշապի գլուխը: Վերեւում ճերմակ ձին հեծած Վարդան Մամիկոնեանն է՝ նիզակով մարտի նետուելիս: Հեղինակը զուգահեռներ է անցկացնում Աւարայրի եւ Սարդարապատի գոյամարտերի միջեւ: Վերին ձախ անկիւնում ղօղանջում են Սարդարապատի ճակատամարտը խորհրդանշող զանգերը: Կտաւի ներքին ձախ անկիւնում գրուած են Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնից: Եռապատկերն ամբողջանում է «Վերածնունդ-1920թ.» կտաւով: Կենտրոնում վերածնուած Մայր Հայաստանն է՝ արեւի ճառագայթների մէջ: Մնացականեանի այս աշխատանքը թանգարանը ձեռք է բերել 1980ին (ՀԱՊԹ 7326/1,2,3/ «Կ» 17):

[33] «Սարդարապատի Ճակատամարտը» գեղանկարը բազմակերպար թեմատիկ աշխատանք է: Կենտրոնում Մայր Հայաստանն է, որի կրծքին՝ կախազարդի վրայ, պատկերուած է Ա. Հանրապետութեան զինանշանը, իսկ ձեռքում ծածանում է դրօշը: Մայր Հայաստանի մօտ պատկերուած են հայրենիքի համար զոհուած հերոսներն, իսկ գլխավերեւում՝ կանոնաւոր բանակը: Ներքեւում Հայաստանը խորհրդանշող Մասիս սարը եւ հայոց հոգեւոր կենտրոն Ս. Էջմիածինն են (ՀԱՊԹ 8416/ «Կ» 25):

[34] «Մարշալ Բաղրամեան» դիմանկարում Սարդարապատի ճակատամարտի մասնակիցը պատկերուած է մեծ տարիքում՝ մարշալական համազգեստով: Վերջին երկու կտաւները թանգարանին է յանձնել պաշտպանութեան նախարարութիւնը՝ 2009ին (ՀԱՊԹ 8420/ «Կ» 29):

[35] Սարդարապատի հերոսամարի 90ամեակին նուիրուած նախագծի շրջանակներում Կենտրոնի սաները այցելեցին թանգարան, ծանօթացան 1918ի մայիսեան հերոսամարտերի պատմութեանը եւ ստեղծեցին կտաւներ: Ամիսներ անց թանգարանում բացուեց «Սարդարապատի Ղօղանջները» խորագրով ցուցահանդէս, որի բնաբանը Պարոյր Սեւակի «Սարդարապատ» բանաստեղծութեան «Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչէք Սարդարապատից» տողերն էին: 2009ին այդ աշխատանքները դարձան ՀԱԹի «Կերպարուեստ» ֆոնդի հաւաքածուի մաս (ՀԱՊԹ 8359/1-16 «Կ» 24/1-16):

THE ITEMS OF THE MAY 1918 HEROIC BATTLES IN THE PRESERVES OF THE MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY

(Summary)

AREVIK MELIQYAN
arevikmeliqyan@gmail.com

The heroic battles the Armenians fought against the Turkish army invading Eastern Armenia in May 1918 are someof the brightest pages in the history of the Armenian nation. Numerous materials dedicated to these battles are preserved in the National Museum of Armenian Ethnography and History of the Liberation Struggle.

The paper gives a panoramic picture of the collection, summarizing the items preserved in the various sections gathered under the titles «Photos», «Documents», «Precious metals», «History of the heroic battle», «Ethnography and mode of life 1, 2, 3», «Textiles», «Glass», and «Fine arts». Lastly, the author assesses their historical value and notes some of the missing items which could shed further light to these battles, which were detrimental for the Armenian nation.

The author notes that the museum staff have been instrumental in collecting data and items from these battles and that a lot of personal belongings have been recovered from the sons, brothers and grandchildren of those who participated in these battles.